Աստի մինչեւ ական տեղին
Նոր նորոգեաց արդեամբ անձին.
Տեղեաւ էր սա Երեւանցի
Բնիկ միաբան էջմիածնի:
Ի 1827 ամի:

Հրատ. «Ազգ. հանդ.», VII-VIII, 412:

Ծանոթ. Լալայանը հաղորդում է, որ Անտոն արքեպիսկոպոսը Հաղբատ է եկել Եփրեմ կաթողիկոսի հետ՝ տարագրության մեջ չլքելով հովվապետին: Ստացվում է, որ այդ ուղևորությունը երկար է տևել, և կաթողիկոսը Ծործորեցու գերեզմանին, իսկ ուղեկցորդը չորս տարի անց՝ ջրակունքում ջրահավաք ավազան է կառուցել:

Ծ Ա Ղ Կ Ա Շ Ա Տ

Փոքրիկ գյուղ է Հաղբատից հարավ-արևմուտք, Կիստոմ գետակի աջակողմյան վտակներից մեկի աջ ափին:

525. ԹԵՎԱՎՈՐ ԽԱՉՔԱՐ. հենած գյուղամիջյան եկեղեցու պատին, թիկունքին.

ԿԱՆԳՆԵՑ /ԱՐ/ ՀԱԿ/ ՄԵ ԱԼՎԱ /ՐՊԱՅ ԵՒ ԻՄ
ԱՄԲԻՆԵ ԱՒԱԳ ԵՂԲԱՐ ՄԵՐ ԴԱՒԹԻ:
ՈՐՔ ԵՐԿՐՊԱԳԷՔ՝ ՅԻՇԵՑԵՔ Ի ՏՐ:
ՀՊՎԱ

526. ԽԱՉՔԱՐ. գյուղից 1,5 կմ արևմուտք, նորաշեն մատուռի մեջ, քիվին, ճակատին և խաչքների միջև 5 տող.

ՍԲ ԽԱՉՍ Բ[Ա]Ր[Ե]Խ[Ա]
ԻՍ Է ..ԳԻՐ ՎԱՐԴԻ
Ն ....ՆԱՄ:
ՔՍ ԱՇ:
ԹՎ[ԻՆ]:ՈՇԶ: (1207):
ՀՊՎԱ

Ծանոթ. Արձանագրությունների վերծանման դժվարությունները չեն հաղթահարվել, և ընթերցումները թերի ու անորոշ են:

Ն Ե Ղ Ո Ւ Ց

Հնում կոչվել է *Նեղոց*՝ ավարառու, արյունարբու լեզգիներին դիմակայելու, նեղելու և հաղթելու իրադարձության առթիվ և ոչ տեղանքի նեղության պատճառով: Գտնվում է Ախթալայից մի փոքր հարավ-արևմուտք:

527. ԽԱՉՔԱՐ. գյուղի արևելյան եզրում, տան բակում, ճակերեսին, 6 տող.



Թ[ՈՒԻՆ] Հ[ԱՅՈՑ] ՆԾԳ (1004) Խ[ԱՉՍ ԿԱԿՆ]ԷՑԻ ՔՈՒ[Ր]Ս-
Ն ԽԱՉԵՆԵՍԻՆ ԵՒ ՇՆՈՂԱ
Ց ԻՍՈՑ: ԱԾ ՈՂՈՐՄԻ ԽԷՉԱ-
ՏՐՈ: ՈՐՔ ԵՐԿՐՊ-
[Ա]ԳԷՔ՝ ՅԻ
[ՇԵՑԷՔ Ի ՔՍ]:

528. ԽԱՉՔԱՐ ՏԵՐՈՒՆԱԿԱՆ. Ճանապարհի եզրին, գյուղից 1 կմ արևմուտք, «Տաշտաձոր», «Խաչաձոր», «Խաչաքալա» կոչվող վայրում, ջրաղացի և այգու մոտ. թիկունքին, շրջանակներին, խաչաքների գլխին, հարավային կողին.

Թիկունքին, 16 տող.

ՇԼԵ (1086) Թ[ՈՒԻՆ], ԵՍ՝ ՏՐ ՍԱՐԳԻՍ,
ԱՌԱՋՆՈՐԴ ՍԲ ՈՒԽՏԻԱ ՀԱՂ-
ԲԱՏԱ, ՇԻՆԵՑԻ ԶՋԱՂԱՑՍ ԵՒ ԱՐ-
ԱՐԻ ԱՋԱՏԱՂԱՑ: ԱՐԿԻ ԵՒ ԶԱՅԳ-
ԻՍ ՏՆԿԵՑԻ ԵՒ ԶԴՐԱԽՏՍ Զ-
ԱՆԱՋԱՆ ՄՐԳԱԲԵՐԱՒՔ Ի ՓԱՌ-
Ս ՍՐԲՈՅ ՆՇԱՆԻՆ ԵՒ Ի ՎԱԵԼ-
ՈՒՄՆ ՏԱՆՍ ՀԱՂԲԱՏԱՅ:
ԱՐԴ, ԵԹԷ ՈՔ ԶԱԱ Ի ՀԱՂԲԱ-
ՏԱ ՀԱՆԷ ԿԱՄ ՍՄԱ ԱՒԵՐՄԱՆՆ ՊԱ-
ՏՃԱՌ ԼԻՆԻ Ի ՄԵԾԱՑ ԿԱՄ Ի ՓՈ[ՔՐ]-
ՈՒՆՑ, ԿԱՄ ԱՌԱՋՆՈՐԴ ՈՐ Ի ՍՄԱ ՇԻ-
ՆՈՒԹԵ[ԱՆ] ԶԱՆԱ, ԱՅՆՊԻՍԻՔ-
Ն ՈՐՈՇԵԱԼ ԼԻՑԻՆ ՅԱՅ ԵՒ ԸՆԴ
ՈՐԴՈՅՆ ԿՈՐՍՏԵԱՆ ԵԼՑԷ
Ի ԽԱՒԱՐՆ ԱՐՏԱՔԻՆ ԵՒ ՅՈՐԴՆ ԱՆՔՈՒՆ:

Հրատ. Ղրիմեցի. 42. Բժշկյանց. 79-80. «Կռունկ». 38. Երզնկյանց. 70. «Արարատ».1887. 219. «Ազգ. հանդ.». III, 325. ՎՏ, 25. Դաֆթարյան. Հաղբատ. 263. Ոսկյան. Գվ. 219. Շահինյան. ՀՍԿՀ. 38:

Ծանոթ. Կ. Դաֆթարյանը քաղել է Բժշկյանցից: Խաչքարի արձանագրության մասին հպանցիկ ակնարկում է նաև Լալայանը:

Այս և հաջորդ երեք արձանագրությունները թեև նույն խաչքարի վրա են, սակայն բովանդակությամբ դիտվել են իբրև առանձին միավորներ:

Արարի ազատաղաց արտահայտությամբ տեր Սարգիսը հաղորդում է, որ առանց սահմանափակության, բոլորն էլ, թե հոգևորականները, ազատները, թե գյուղացիները, հաղբատցիները, թե այլք, կարող են իրենց հասկն աղալ այս ջրաղացում: *Յորդն*՝ որդը:

529. ՇՐՋԱՆԱԿՆԵՐԻՆ, սկսվում է ծալ (հյուսիսային) կողի ստորին եզրից, 5 տող



:Շ:Լ:Ը: (1089) Թ[ՈՒԻՆ], ԵՍ՝ ՏՐ ՍԱՐԳԻՍ ԱՌԱՋՆՈՐԴՍ ՀԱՂԲԱ-
ՏԱ, ԿԱՆԳՆԵՑԻ ԶՆՇԱՆՍ
Տ[Է]ՐՈՒՆԱԿԱՆ ԶԵՆ ՀԱՒԱՏԱՑԵԼՈՑ ԵՒ ՊԱՀԱՊԱՆ ԹԱԳԱՒ
ՈՐԱՑ ՄԵՐՈՑ ԿԻՒՐԻԿԷԻ, ՍՄՊ-
ԱՏԱ ԵՒ ԴԱՒԹԻ ԶԱՐՄԻ ՍՈՑԱ:

Հրատ. Դրիմեցի, 43, Բժշկյանց, 80, «Կռունկ», 38, Երզնկյանց, 70, Դաֆթարյան, Հաղբատ, 263, Շահինյան, ՀՄԿՀ, 38:

Ծանոթ. Երկու տարբեր թվականների առկայությունը կարող է բացատրվել այն պարագայով, որ 1089 թվականին, խաչքարը կանգնեցնելուց հետո, վանքի առաջնորդ Սարգիսը ցանկացել է իր նախորդ ձեռնարկումների մասին ևս հիշատակել: Չի բացառված նաև, որ այս խաչքարը նա կանգնեցրած լիներ մասնավորապես 1089 թվականին՝ իր կատարած գործերը հավերժացնելու համար: Ա. Շահինյանի կարծիքով, թվականի շփոթությունը գրչի սխալի հետևանք է, և խաչքարը կանգնեցվել է ՇԼԵ – 1086 թ., նվիրագիրը գրվել է ՇԼԸ – 1089 թվին:

530. ԽԱՉԱԹԱԳԻ երկու կողմում, հնգալյան տող.

ՍԲ Տ[Է]Ր-	ՍԱՐԳ-
ՈՒՆԱԿ-	ՍԻ Ի Ք-
ԱՆ ԼԵՐ ԲԱ-	ՈՒՄ ՅԱՌ
ՐԵԽԱ	ԱՋԱԳԱՈՒ
ԻՍ ՏՐ	ԹԵ[Ա]ԽՆ

Հրատ. Շահինյան, ՀՄԿՀ, 38:

Ծանոթ. Տեր Սարգիսը Կյուրիկե Բ թագավորի երբեմնի դռան երեցն է, Հաղբատավանքի եպիսկոպոսական աթոռի հիմնադիրը:

531. ԽԱՉՔԱՐ. հարավային կողին, 3 տող.

Ե՛:Զ	ԵՒ Զ-
ՔԻԹ	ՔԻԹ
ԷՐԷՑ	ԷՐԷՑ:

Հրատ. Շահինյան, ՀՄԿՀ, 38:

Ծանոթ. Խաչքարը կանգնած է ցածրիկ պատվանդանի վրա: Քառանկյուն խորանի մեջ, եռաստիճան Գողգոթայի վրա բարձրանում է խաչը՝ թևերին գամերի գնդերով:

Անուղղակի այս՝ *ՔԻԹ* անվանը անձը Ա. Շահինյանի ենթադրությամբ՝ «հավանաբար խաչքարը կերտող վարպետի կամ արձանագրության գրչի անունն է»: Քիթը և՛ վարպետն է, և՛ գրիչը:

ՇՆՈՂ

Շրջանի հնագույն գյուղերից է: Շրջապատի ավերակված բնակավայրերից ու դամբարաններից հայտնաբերված մշակութային ժառանգության բազմազան գտածոները վերաբերում են բրոնզի և երկաթի դարաշրջաններին:

Շնողը հռչակված է հատկապես իր ամրոցով, որը հայտնի է Կայծոն անունով: Գտնվում է գյուղի հյուսիսային եզրի դարավանդին, Դեբեդի կիրճի բանուկ ճանապարհի ակտիվ տեսադաշտում: Ներսում կան ավերակներ, կիսավեր բազիլիկ եկեղեցի: Դավիթ Քոբայրեցին իր «Մեկնության» ընդարձակ հիշատակարանում ամրոցը համարում է *զանառիկն ... զԿայծոն:*[40] Նվաճել են սելջուկները, թաթարները, բայց իբրև ամրոց գործել է մինչև ԺԹ դ. վերջը:

Գյուղում կան նույն դարում վերակառուցված թաղակապ երկու եկեղեցի, մատուռներ, խաչքարեր, իսկ շրջակայքում՝ բազմաթիվ բնակավայրեր, ավերյալ աղոթարաններ, գերեզմանատներ, բովեր-ծակեր՝ պղնձահանքեր: Շնողից 3 կմ հարավ, անտառի մեջ մնում է Մանստևի վանքը, որի երեսակալ քարերը պոկել ու դպրոց են շինել 1930-ական թվականներին: Կա նաև կամուրջ, Կարմիր Վարդան կոթողը: Գյուղամիջի Ս. Գևորգ եռանավ, հողածածկ եկեղեցին վերանորոգել են էրզրումցի վարպետները 1893 թ., իսկ Ս. Սարգիսը՝ 1894-ին:

532. ԽԱՉՔԱՐ. Կայծոն ամրոցի հարևանությամբ, ճակատին և խորանի կամարաղեղի անկյուններում, 4 տող.



ՍԲ Տ(Է)ՐՈՒՆԱԿԱՆ ՈՂ-
ՈՐՄԵԱ ՎԱՆԷՆԷ:
ԹՎ(ԻՆ) ՈՀ Ա (1222):

Հրատ. Շահինյան. ՀՄԿՀ. 41. Շախկյան. Լոռի. 128:

Ծանոթ. Այստեղ 3 խաչքարեր են ներառված կամարի տակ: Դրանք պարզ. դասական զուսպ մշակումով կոթողներ են. կոթունից վեր են ձգվում իրար չկրկնող բուսազարդեր, իսկ խորանի կամարից կախված են խաղողի ողկույզներ ու նռան պտուղներ: Խորաններից վեր բավականին լայն մակերեսները մշակված են խաչերով ու հյուսկեն հատող զարդերով: Արձանագրությունը հարավային եզրի խաչքարի վրա է:

533. ՏԱՊԱՆԱՔԱՐ. Նախորդ խաչքարի առաջ, 1 տող.



ՎԱՆԵՆԻ

Հրատ. Շահինյան. ՀՄԿՀ. 41. Շախկյան. Լոռի. 128:

Ծանոթ. Խաչքարն ու սալատապանը վերաբերում են նույն անձին: Ա. Շահինյանի ասելով, «սա հավանաբար Աստուսհնի հռչակավոր կամուրջը շինող, Զաքարե և Իվանե եղբայրների քույր և Աբաս Կյուրիկյան թագավորի կին Վանենին է»: Այս կարծիքը զուրկ է որևէ հիմքից: Զաքարյանների քույր Վանենին թաղված է Հաղբատավանքի ժամատանը, Կյուրիկյանների տապանատանը: Այս Վանենին շնողցի է:

---

[40] Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. Ե-ԺԲ դդ., էջ 223: